# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 11) 514 200, ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/07-28157Ն «10» 04 2019թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Ս. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան

Ձեր 04.04.2019թ. հ. 01/15.1/2947-19 գրությամբ ներկայացված «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կապակցությամբ հայտնում եմ, որ «Երևանի հ. 185 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին ամրակցված տարածքից ներկայումս ժամանակավորապես չօգտագործվող տարածքը հետ վերցնելը և այն անհատույց ու անժամկետ այլ կազմակերպության տրամադրելը չի բխում դպրոցի շահերից և կարող է խոչընդոտ հանդիսանալ դպրոցի բնականոն գործունեության և դպրոցի կողմից տարբեր ծրագրերի իրականացման համար:

Հարկ է նշել, որ ՊՈԱԿ-ի մարզական և հանդիսությունների դահլիճները ուսումնական տարվա ընթացքում գործում են գերծանրաբեռնված, ավելին՝ շաբաթական 13 դասաժամ դահլիճը զբաղեցնում են միաժամանակ երկու դասարաններ և դրանք չեն կարող տրամադրվել N 6 ուսումնարանին համատեղ օգտագործման համար:

Հարգանքով՝

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Իրավաբանական վարչություն
կատ. Զ.Առաքելյան, հեռ.011-514-253

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Բ Ա Ժ Ի Ն
ՄՏԻՑ ԹԻՎ 09/7660-19
«11» 04 2019 թ.